ՀՆԱԳՈՒՅՆ ԱՂՁՆԻՔԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽՈՒԴԱՆՅԱՆ Հ. Հ.

Ք.ա. 2-րդ հազարամյակի խեթական, ապա ասորեստանյան սեպագիր արձանագրություններում ժամանակ առ ժամանակ հիշատակվող Ալզի(յա)/Ալս/շե (KUR URUAlzi(ya), KUR URUAlše/i) քաղաքական միավորը մասնագիտական գրականության մեջ վաղուց ընդունված է նույնացնել հայոց պատմական Աղձնիք նահանգի անվան և տարածքի հետ[1]: Մի շարք

---

[1]**Քոսյան Ա.,** *Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Ե., 1999, էջ 84,* **նույնի՝** *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Ե., 2004, էջ 34,* **Дьяконов И. М.** *Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1951, N 2-4 (1, прим. 18; 3 и прим. 6;4-7, 10 (I, 62 сл.; II, 89 сл.); 11; 12; 21 и прим. 4; 23, прим. 61; 28 (35 сл.) и прим. 1; 40 (д, е); 50 (4); /B2/,* **Меликишвили Г. А.** *Урартские клинообразные надписи (ВДИ, 1971, N3, с. 235);* **ЭбхЫЭЗ**[a] *Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 89, 90,* **Хачатрян В. Н**. *Восточные провинции Хеттской империи, Е., 1971, с. 110, 114, 115, 119, 143;* **Капанцян Гр.** *Хайаса-колыбель армян, Е., 1948, с. 143;* **Аветисян Г.М**. *Северная Месопотамия и юго-западные области Армянского нагорья, Е., 1997, с. 12, 13:*

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ միանգամայն խնդրահարույց են հին հույն և հռոմեացի հեղինակների վկայակոչած՝ Աղձնիքին առնչվող տեղանվանաձևերը, որոնք բազմազան են, շատ դեպքերում, ինչպես հատուկ է անտիկ աշխատություններին, ներկայացված են աղավաղված ու թերևս իրական հնչողությունից հեռու՝ հարմարեցված հին հունարենի և լատիներենի հնչյունաբանությանը: Այդ իսկ պատճառով, վերապահումով մոտենալով հեղինակների կողմից դրանց ճշգրիտ հնչողությամբ տառային վերարտադրությանը, կարծում ենք՝ ստուգաբանության տեսակետից թերևս առավել մատչելի են միայն սեպագիր և միջնադարյան տեղանվանաձևերը: Այս միտումնավոր բացթողումը որևէ կերպ չի առնչվում տվյալ տարածքի պատմաքաղաքական, աշխարհագրական և էթնիկական խնդիրներին, այլ ընդամենը կատարվել է վերոհիշյալ նկատառումներով, այն է՝ ստուգաբանական ուսումնասիրություն կատարել միայն սեպագիր և միջնադարյան տեղանվանաձևերի միջև: Ի հավելումն՝ Ք.ա. VII դ. հետո ընկած ժամանակահատվածում տվյալ տարածքին առնչվող ռազմաքաղաքական, մշակութային, էթնիկական կազմի և նմանատիպ այլ խնդիրներ տվյալ պարագայում մեր գիտական ուսումնասիրության շրջանակում չեն:

մասնագետներ ենթադրում են, որ այն համապատասխանում է ասորեստանյան աղբյուրների Էնզիտեին և դասական աղբյուրների Անզիտենեին, մինչդեռ մյուսները կարծում են, որ դա Վերին Տիգրիսի և Հայկական Տավրոսի միջև ընկած տարածաշրջանի կենտրոնը՝ Սասունից հարավ-արևելք գտնվող անտիկ աղբյուրների Արզանենեն (Arzanene) է[2]: Ավելի ուշ, արդեն Վանի թագավորության՝ Ք.ա. VIII դ. սեպագիր աղբյուրներում վկայված Ալզի(նի) (KUR Alzi(ni)) երկիրը տեղագրորեն և անվամբ հիմնականում նույնանում է խեթասուրական աղբյուրների Ալզիի հետ, սակայն այս երկուսի զբաղեցրած տարածքի ճշգրիտ չափերի կամ սահմանների վերաբերյալ որևէ հստակություն չկա[3]: Մյուս կողմից, Ալզիի բնակավայրերի վերաբերյալ սեպագիր վկայակոչումները խիստ սահմանափակ ու կցկտուր են: Այսուհանդերձ, դատելով ասուրական և բիայնական սեպագիր աղբյուրների ընձեռած տվյալներից, պարզ է դառնում, որ միջինասորեստանյան և Վանի թագավորության ժամանակաշրջանի Ալզինին այլևս չուներ այն հզորությունը, ինչ Ք. ա. XIV-XIII դդ. խեթաասուրական աղբյուրներում հիշատակվող լայնարձակ Ալզի պետությունը, որի հետ հաշվի էին նստում թե՛ Խեթական տերությունը, թե՛ Միտաննին և թե՛ աստիճանաբար պատմության թատերաբեմ բարձրացող Ասորեստանը[4]: Այլ կերպ ասած՝ Ալզինին տվյալ դեպքում թերևս ներկայացնում է ընդամենը Ալզիի երբեմնի հզոր թագավորության վարչաքաղաքական, արքայանիստ կենտրոնը՝ իր շրջակա տարածքով, որի անունով էլ ժամանակին կոչվել է ամբողջ երկիրը՝ այսպիսով նույնանալով միջնադարյան աղբյուրներում հիշատակվող՝ Աղձնիքի առաջին գավառի՝ Աղձնի (Արձն) հետ[5]: Դրա ապացույցն է նաև պատմական միևնույն ժամանակաշրջանում Աղձնիքի տարածքում Ալզիի ուժեղ արքայությանը փոխարինելու եկած Արմե-Շուպրիա պետական միավորը, որը թեև չուներ իր նախորդի ռազմաքաղաքական հզորությունը, սակայն կարող էր համարվել վերջինիս արժանի

Տե՛ս **Խուդանյան Հ.,** *«Ալզի» (Աղձնիք) տեղանվան ստուգաբանության հարցերի շուրջ [Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2012, N1, էջ 185-191]:*

[2] **Forrer E.** *Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920, S. 20,* **Головлева Л. М.** *Царство Алзи во второй половине II тысэ до нээ (Древний Востоки 1978и N 3и сэ 71)и* **Ադոնց Ն.**, *Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 49,* **Քոսյան Ա.,** *Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 35:*

[3] **АрутюняяН.яВ.** *Корпус урартских клинообразних надписей (այսուհետև՝ КУКН)иЕхитЦ/Iисх 495—496х*

[4] **Аветисян Г. М.** *Государство Митанни, Е., 1984, с. 70-72, 85, 90,* **Խաչատրյան Վ.**, *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998, էջ 55, АВИИУ, N 2-4, (1, прим. 18), с. 266,* **Ադոնց. Ն.,** *նշվ. աշխ., էջ 49:*

[5] *Ի տարբերություն գոյություն ունեցող այլ տեսակետների՝ կարծում ենք, որ «Աղձնիք» տեղանունը ծագում է իր առաջին գավառ Աղձն/Արձն-ի անվանումից (Տե՛ս* **Խուդանյան Հ.**, *նշվ. հոդվ., էջ 184, ծան. 2, էջ 189):*

ժառանգորդը: Այսպիսով, ինքնին հասկանալի է, որ այս հնագույն պատմա-քաղաքական միավորը միշտ չէ, որ ունեցել է միևնույն սահմանները և քաղաքական կշիռը: Մի շարք պատճառներով ժամանակ առ ժամանակ այն կարող էր կորցնել իր տարածքի մի մասը կամ ձեռք բերել նոր տարածքներ, ինչպես և եղել է հաճախ, տրոհվել մի քանի մանր թագավորությունների կամ, այսպես կոչված, «երկրների»:

Բացի սեպագիր աղբյուրներից, Աղձնիքը բազմիցս վկայակոչվում է նաև թե՛ հունահռոմեական, թե՛ հայկական և թե՛ օտար այլ հեղինակների աշխատություններում: Հայկական սկզբնաղբյուրներում այն հիշատակվում է որպես «Տունն Աղձնեաց»[6], «Աշխարհն Աղձնեաց»[7], «Երկիրն Աղձնեաց»[8], «Կողմն Ասորեստանի»[9], «Փայտի աշխարհ»[10], իսկ օտարալեզու աշխատություններում՝ որպես Արքսանենե, Արզանենե, Արզանիս, Արզանիաս, Արզան, Էրզեն և այլն[11]: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Աղձնիքը եղել է Մեծ Հայքի երրորդ նահանգը և գտնվել է Ծոփքի (Չորրորդ Հայք), Տուրուբերանի, Մոկքի և Միջագետքի միջև: Նրա սահմանները հյուսիսում կազմում էին Հայկական Տավրոս լեռները, արևելքում՝ Բաղեշ և Արևելյան Տիգրիս գետերի ջրբաժան լեռնաշղթաները, հարավում՝ Արևմտյան Տիգրիս գետը, իսկ արևմուտքում՝ Տիգրիս գետի ակունքները համարվող լեռնային աղբյուրները[12]: Ըստ Ղ. Ալիշանի՝ «Աղձնիքի բուն սահմանը սկսվում է Վանա լճի հարավ-արևմտյան ծայրից, Թուխ գետի հովտից և կոչվեց նախ գաւառն

---

[6] **Փ. Բուզանդ**, *Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 33,* **Թ. Արծրունի**, *Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 484:*

[7] **Եղիշե**, *Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 10, 51, 93, 132,* **Հովհաննես Դրասխանակերտցի**, *Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 18, 26, 34, 106:*

[8] **Փ. Բուզանդ,** *Պատմութիւն հայոց, էջ 316, 331:*

[9] **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 460,* **Մ. Խորենացի**, *Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 70, 116, 263:*

[10] **Ղ. Ալիշան**, *Հայապատում, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 283: Աղձնիքի այս տեղանվանաձևը գիտական լայն շրջանակներում երբևէ չի գործածվել և միայն մեկ անգամ է վկայակոչվում Ղ. Ալիշանի սույն աշխատությունում:*

[11] **Պրոկոպիոս Կեսարացի**, *թարգմանությունը բնագրից Հ. Բարթիկյանի (Բյուզանդական աղբյուրներ), Ե., 1967, էջ 19, 115, 192,* **Գալչեան Ռ.,** *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Ե., 2005, էջ 76 (քարտեզ N 12), էջ 96 (քարտեզ N 23), էջ 170 (քարտեզ N 67), էջ 175 (քարտեզ N 72), էջ 176 (քարտեզ N 73), էջ 177 (քարտեզ N 74), էջ 230 (քարտեզ N 110), էջ 232-233 (քարտեզ N 112/112a), էջ 242 (քարտեզ N 118a):*

[12] **Երեմյան. Ս.Տ.,** *Հայաստանը ըստ □Աշխարհացոյց□-ի, Ե., 1963, էջ 107,* **Նահապետյան Ռ.Ա.,** *Աղձնիք, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1974, էջ 16,* **Հակոբյան Թ. Խ.**, *Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 233, տե՛ս նաև* **Գալչեան Ռ.,** *նշվ. աշխ., 2005, էջ256 (քարտեզ N 125):*

Աղձնեաց և յետոյ Հողց կամ Խողց: Ինչպես և մինչ այժմ, նաև ըստ սեմական լեզուների, այդ տարածքը կոչվում է Խարգան և Խզու»[13]: Աղձնիքն ուներ տասնմեկ գավառ, որոնցից յոթը՝ Կեթիկը, Տատիկը, Ազնվաձորը, Երխեթքը, Գգեղիսը, Սալնո ձորը և Սանասունքը լեռնային էին, իսկ Նփռետը (Նփրկերտ), Անգեղ տունը[14], Քաղը և Աղձնը՝ համեմատաբար դաշտավայրային[15]: Ինչպես արդեն նշվեց, Աղձնիքի հյուսիսային սահմանն անցնում է Հայկական Տավրոս լեռնաշղթայով, որի Սիմ (2689 մ), Անդոկ (2830 մ), Ծովասար (3355 մ), Մարաթուկ (2150 մ) հսկա լեռնաբազուկներն արևմուտքում կտրվում են Կղեսուրքի, իսկ արևելքում՝ Բաղեշի (այժմ՝ Ռահիվա) լեռնանցքներով: Դրանց միջոցով Հայաստանի ներքին շրջանները կապվում էին Աղձնիքի և Միջագետքի երկրների հետ[16]: Ղ. Ալիշանը, մասնավորապես խոսելով Հայկական Տավրոսի մասին, նշում է, որ Սիմ լեռները տարանջատում են Տուրուբերան և Աղձնիք նահանգները, որոնք, իրենց հերթին, բաժանում են Տիգրիսի և Արածանիի ավազանները[17]: Այս լեռներից հարավ ընկած է Տիգրանակերտի (Ամիդ, այժմ՝ Դիարբեքիր) դաշտը[18]: Նշենք նաև, որ Աղձնիքի հյուսիսային մասը (Հայկական Տավրոսի բարձրադիր շրջանները) ունի խստաշունչ, իսկ հարավը, որը հարթավայրային է, տաք բնակլիմայական պայմաններ[19]:

Աղձնիքը հայտնի է իր լեռնային գետերով և աղբյուրներով: Հայկական Տավրոսից սկիզբ առնող բազմաթիվ գետեր թափվում են Ծովք (այժմ՝ Գյոլջուք կամ Գյոլջրք) լեռնային լիճը՝ այսպիսով սնելով նրան, իսկ վերջինից էլ ճյուղավորվում են Արևմտյան Տիգրիսի վտակները: Դրանցից առավել նշանավորներն են Քաղիրթը (կոչվում էր նաև Շիթիթմա, այժմ՝ Բաթման-սու), ապա Խարգան (նաև՝ Արգան), որը հոսում է Աղձն գավառի միջով[20], ինչպես և Կեցան ու Բաղեշ (Բիթլիս-սու) գետերը, որոնք թափվում են հարավարևելյան սահմանով ձգվող Արևելյան Տիգրիսի (Ջերմ) մեջ[21]:

Հնագույն Աղձնիքի տնտեսությանն ու զբաղմունքներին առնչվող տեղեկությունները գլխավորապես պահպանվել են ասուրական և

---

[13] **Ղ. Ալիշան,** *Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 230:*

[14] *Անգեղ տուն գավառը միշտ չէ, որ եղել է Աղձնիքի կազմում, այլ պատմական տարբեր ժամանակահատվածներում անցել է մերթ վերջինիս, մերթ՝ Ծոփքին (տե՛ս* **Երեմյան Ս. Տ.,** *նշվ. աշխ., էջ 24, 35):*

[15] *Տե՛ս* **Գալչեան Ռ.**, *նշվ. աշխ., էջ 210 (քարտեզ N 97), էջ 236 (քարտեզ N 114):*

[16] *Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Ե., 1971, էջ 23:*

[17] **Ղ. Ալիշան**, *Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, էջ 58:*

[18] **Ամիրեան Հ.**, *Աշխարհագրութիւն պատմական Հայաստանի (անտիպ), 1934, էջ 10:*

[19] **Նահապետյան Ռ. Ա.,** *նշվ. աշխ., էջ 163:*

[20] **Երեմյան Ս. Տ.**, *նշվ. աշխ., էջ 107:*

[21] *Նույն տեղում, էջ 163:*

բիայնական սեպագիր աղբյուրներում: Այսպես, Ք.ա. VIII դ. ասորեստանյան արձանագրությունները վկայում են Աղձնիքի տարածքում գինու առկայության վերաբերյալ, ինչն ինքնին փաստում է տվյալ երկրամասում գինեգործության, հետևաբար և խաղողագործության զբաղմունքի մասին[22]: Այս առումով, ըստ երևույթին, ամենահին վկայությունները պահպանվել են Ասորեստանի արքա Աշշուրնաձիրապալ II-ի (Ք.ա. 883-859 թթ.) տարեգրությունում, որտեղ ուղղակիորեն խոսվում է Շուբրիայի[23] արքա Անխիտեից և Բիթ-Զամանիի[24] արքա Ամմեբաալից գինու և այլնի հարկ ստանալու մասին (Ք.ա. 882 թ.)[25]: Այդ նույն տարեգրության մեկ այլ հատվածում Աշշուրնաձիրապալը, ի թիվս այլոց, մանրամասնորեն ներկայացնում է Բիթ-Զամանի երկիրը նվաճելու և այդ երկրի թագավոր Իլանուին պատկանող այգիները կտրելու իրողությունը[26]: Այս վկայությունները թույլ են տալիս ենթադրել, որ տվյալ բնաշխարհագրական տարածքը հնուց ի վեր եղել է Հայկական լեռնաշխարհի խաղողի «ոստաններից» մեկը: Թերևս դրա օգտին են խոսում նաև հույն պատմահայր Հերոդոտոսի հաղորդումներն այն մասին, որ Արմենիայից կաշեպատ լաստանավերով գինի է արտահանվել Բաբելոն[27]:

Աղձնիքը հնուց ի վեր հայտնի է նաև իր զարգացած երկրագործությամբ: Այս առնչությամբ ուշագրավ են ասորեստանյան աղբյուրներում պահպանված տեղեկությունները Շուբրիա «երկրի» վերաբերյալ: Ասորեստանցի լրտես Աշշուրդուրպանիի՝ Սարգոն II-ին (Ք.ա. 722-705 թթ.) ուղղած նամակում մասնավորապես խոսվում է Շուբրիայի տիրակալի կողմից փախստական ասորեստանցիներին տներով, դաշտերով և այգիներով ապահովելու մասին[28]: Մեկ այլ աղբյուրում Ասորեստանի արքա Ասարխադդոնը (Ք.ա. 681-669 թթ.) Շուբրիան նվաճելուց հետո Աշշուր աստծո՝ ձիավորներից, հրամանատարներից, արհեստավորներից և այլնից կազմված

---

[22] Арутюнян Н. В. *Земледелие и скотоводство Урарту, Е., 1964, с. 116.*

[23] *Նույն տեղում, էջ 69: Շուբրիան տարածվում էր Սուբնատ (Տիգրիսի վտակ) գետից մինչև Վանա լիճ:*

[24] *Բիթ-Զամանի □երկիրը□ Ամեդու կենտրոնով մասնագետները սովորաբար տեղադրում են Ամիդի կամ ժամանակակից Դիարբեքիրի շրջանում [տե՛ս* Adontz N. *Histoire d'Armnnie, Paris, 1946, p. 65, АВИИУ, (23. (III, 92) прим. 69, 70)]: Գտնվելով Հայկական լեռնաշխարհի ծայր հարավարևմտյան հատվածում՝ այս շրջանը, ըստ «Աշխարհացույց»-ի տվյալների, Հայոց Միջագետքի անմիջական հարևանությամբ էր:*

[25] *АВИИУ, (23. (II, 2):*

[26] Арутюнян Н. В. *Земледелие и скотоводство Урарту, с. 116,* **նույնի՝** *Биайнили (Урарту), Е., 1970, с. 95, АВИИУ, 23 (III, 92).*

[27] Հերոդոտոս, *Պատմություն ինը գրքից, թարգմ. և ծնթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Ե., 1986, I, 194, էջ 80,* Մանանդյան Հ., *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Ե., 1945, էջ 58:*

[28] Арутюнян Н. В. *Земледелие и скотоводство Урарту, с. 116.*

հոծ բանակում հիշատակում է նաև երկրագործների և խաղողագործների[29]: Այս ամենը, հավանաբար, գալիս է հաստատելու այն իրողությունը, որ Շուբրիայի տնտեսության մեջ ուրույն նշանակություն ու դեր են ունեցել երկրագործությունն ու այգեգործությունը[30]: Այսպիսով, Թուկուլթի-Նինուրթա II-ը (Ք.ա. 891-884 թթ.), հիշատակելով Բիթ-Զամանի «երկրի» երկու բնակավայրերը գրավելու մասին, անուղղակիորեն նշում է նաև դրանց ծղոտի ու գարու պաշարները հրկիզելու հանգամանքը[31], իսկ նրան հաջորդած Աշշուրնաձիրապալ II-ը իր տարեգրության մեջ ուղղակի հայտնում է, որ Բիթ-Զամանիում Իլանուին որպես նոր կառավարիչ նշանակելուց հետո հարկատու է դարձրել վերջինիս՝ հարկի մեջ, ի շարս այլոց, հիշատակելով նաև 2000 իմեր գարի, որը մոտավորապես կազմում է 80 տոննա[32]: Բնականաբար, հացահատիկի այս հսկայական քանակությունը վկայում է տվյալ տարածաշրջանում հացահատիկային մշակաբույսերի լայն տարածման մասին, որի հիմնական պայմանը, անշուշտ, բարեբեր հողն էր և բարենպաստ կլիման:

Աղձնիքի տնտեսության մյուս կարևոր բնագավառը անասնապահությունն էր: Այս առնչությամբ առաջին կարևոր հիշատակությունը կրկին վերաբերում է Աշշուրնաձիրապալ II-ին, որը Տուշխանի արձանագրության մեջ նշում է, որ Բիթ-Զամանիից առգրավել է 2000 գլուխ խոշոր և 5000 գլուխ մանր եղջերավոր անասուն՝ Իլանուին պարտադրելով իրեն որպես տարեկան հարկ վճարել նաև 1000 գլուխ մանր եղջերավոր անասուն[33]: Ասորեստանի այս նույն արքան Ք.ա. 866 թ. դեպի Վերին Տիգրիսի ավազան ձեռնարկած արշավանքի ժամանակ հարկեր է վերցնում Աշշայի թագավոր Գիրիդադիից և Իզալայի (Իծալա) տիրակալ Իտտիից. ոսկու և արծաթի կողքին Աշշուրնաձիրապալը հիշատակում է նաև խոշոր և մանր եղջերավոր անասունների մասին[34]: Բացի այդ, Ասորեստանի արքա Ասարխադդոնը սեպագիր արձանագրություններից մեկում խոսում է այն մասին, որ Շուբրիայից որպես ավար վերցրած ցլերն ու ոչխարները ինքը մտադիր է զոհաբերել աստվածներին[35]: Ինչ վերաբերում է արդեն Վանի թագավորության սեպագիր աղբյուրների հաղորդած տեղեկություններին, ապա Աղձնիքի անասնապահությանն առնչվող առաջին

---

[29] Նույն տեղում, էջ 69:

[30] Նույն տեղում, c. 116, ծնթ. 84: Շուբրիա «երկրի» որոշ լեռնային հատվածներում (Սասնո լեռներ) ընդհուպ մինչև մեր ժամանակները բնակչության հիմնական զբաղմունքներից էին այգեգործությունը և խաղողագործությունը: Սա հատկապես վերաբերում է ցածրադիր վայրերին՝ մասնավորապես Տալվորիկին, որտեղ, օրինակ, աճում են խաղող, թուզ և այլ մրգեր: Սասնո Խուլբ և Խիանք շրջանները նույնպես հայտնի են իրենց մրգերով:

[31] АВИИУ, 22.

[32] Арутюнян Н. В. *Земледелие и скотоводство Урарту*, с. 69.

[33] Նույն տեղում, էջ 166:

[34] Նույն տեղում, էջ 165, 166, АВИИУ, 23 (III, 92):

[35] АВИИУ, 67 (м).

կարևոր հիշատակությունը պատկանում է Արգիշտի I-ին (Ք.ա. 786-764 թթ.), որը Տարիունի (Դարոյնք) և Ուրմե[36] «երկրներից» վերցրած ավարի մեջ հիշատակում է 25 ձի, մի քանի հազար գլուխ խոշոր[37] և 48825 մանր եղջերավոր անասուն[38]: Թեև այս տեղեկությունը տվյալ պարագայում վերաբերում է այս երկու «երկրներին» միասին, այսուհանդերձ, Ուրմեին բաժին ընկնող անասունների գլխաքանակը ևս պետք է զգալի լիներ: Դա, ըստ ամենայնի, փաստվում է նաև Արգիշտի I-ին հաջորդած՝ նրա որդի Սարդուրի II-ի (Ք.ա. 764-735 թթ.)՝ Վանի ժայռի վրա փորագրված տարեգրությամբ, որտեղ մասնավորապես նշվում է, որ դեպի Ուրմե ձեռնարկած իր երրորդ արշավանքից ստացված ավարի մեջ եղել են 2538 գլուխ խոշոր և 8000 գլուխ մանր եղջերավոր անասուններ[39]: Բացի այս հիշատակություններից, ասորեստանյան և ուրարտական սեպագիր աղբյուրները տեղեկություններ են պահպանել նաև Աղձնիքի տարածքում դեռևս հնագույն ժամանակներից ի վեր ձիերի, ջորիների և էշերի առկայության և տնտեսության մեջ ունեցած դրանց դերի ու նշանակության մասին: Թուկուլթի-Նինուրթա II-ի տարեգրություններում խոսվում է այն մասին, որ վերջինս, Շուբարիից որոշ «երկրներ» նվաճելով, հասնում է մինչև Գիլզանու և Նաիրի՝ արշավանքի ճանապարհին որպես ավար վերցնելով 2720 ձի[40]: Աշշուրնաձիրապալ II-ի տարեգրությունում մի դեպքում նշվում է, որ նա Բիթ-Զամանիից առգրավել է 460 լծկան ձիեր, իսկ մեկ այլ հաղորդման համաձայն՝ Շուբրիա, Ներքին Որումու, Նիրդուն, Բիթ-Զամանի և Սանգիբուտու «երկրների» թագավորներից ստացած հարկի մեջ ոսկու, արծաթի, կառքերի և այլնի հետ հիշատակվում են նաև ձիեր և ջորիներ[41]: Վերն ասվածից կարելի է հետևություն անել, որ անասնաբուծությունից հետո հնագույն Աղձնիքի տնտեսության մեջ առանձնահատուկ տեղ է ունեցել ձիաբուծությունը: Տվյալ պատմական ժամանակահատվածում ձիերը հիմնականում օգտագործվել են երկրագործական աշխատանքներում և անասնապահական տնտեսություններում, նաև ռազմական գործում: Հետևաբար, ենթադրելի է, որ

---

[36] *Ուրարտական աղբյուրներում հիշատակվող Ուրմե «երկրի» տեղադրության հարցում գիտական շրջանակներում առկա է բազմակարծություն: Հաշվի առնելով եղած տեսակետերը՝ թերևս կարելի է գալ այն ընդհանրական հետևությանը, որ այս «երկիրը», հավանաբար, գտնվել է Վանա լճից հարավ-արևմուտք և, հետևաբար, ամբողջությամբ կամ մասնակիորեն եղել է Աղձնիքի կազմում կամ էլ առնվազն վերջինիս սահմանակցել է հյուսիս-արևելքից (տե՛ս* КУКН, *с. 529,* **Forrer E.** *նշվ. աշխ., էջ 87,* **Меликишвили Г. А.** *Урартские клинообразные надписи, М., 1960, с. 446.*

[37] *Տեքստի այս հատվածը վնասված է, հետևաբար չի հասկացվում, թե խոսքը քանի հազարի մասին է:*

[38] *КУКНисх 181х*

[39] *Նույն տեղում, էջ 229:*

[40] **Арутюнян Н. В.** *Земледелие и скотоводство Урарту, с. 144.*

[41] *Նույն տեղում, էջ 159, 166:*

բացի ձիաբուծությունից, ամենայն հավանականությամբ, Աղձնիքում զբաղվել են նաև ձիավարժությամբ: Ձիաբուծությունը մշտապես եղել է Հայկական լեռնաշխարհի կարևորագույն զբաղմունքներից մեկը՝ ի դեմս նաև հնագույն Աղձնիքի Շուբրիա, Բիթ-Զամանի և այլ «երկրների»[42]: Աղձնիքում ջորիների և էշերի առկայության մասին թեպետ հազվադեպ, սակայն հիշատակվում են դարձյալ ասորեստանյան աղբյուրներում: Թուկուլթի-Նինուրթա II-ը Բիթ-Զամանիից առգրավված ձիերի հետ նշում է նաև ջորիներ[43], իսկ Թիգլաթպալասար III-ի (Ք.ա. 745-727 թթ.) հայտնի տարեգրության մեջ ուղղակիորեն հիշատակվում է Հայկական Տավրոսի նախիրյան բնակավայրերից ավար վերցված 300 ջորիների և 660 էշերի մասին[44]:

Այսուամենայնիվ, Աղձնիքը հին աշխարհում կարևորվում էր հիմնականում երկաթի, պղնձի, կապարի, նավթի[45] և այլ հարուստ հանքավայրերի շնորհիվ[46]: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Աղձնիքն «ունի քաջ երկաթ», կամ «ունի նաւթ և երկաթ առավել»[47], իսկ այլ աղբյուրների համաձայն՝ Արածանիի և Եփրատի միախառնման վայրից դեպի հարավ ընկած շրջանում գտնվում են լեռնային բյուրեղի (Beryllus) և աղի հանքեր[48]: Մեկ ուրիշ աղբյուրում վկայվում է Բաղեշի ջերմուկների մասին[49]: Տվյալներ կան նաև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններից դեպի Սիրիա

---

[42] *Նույն տեղում, էջ 210:*

[43] *АВИИУ, 22.*

[44] *яАрутюняНхяВхяЗемледелиеяиясkотоводствояУрартуиясхятmтхя*

[45] *Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թուրքական կառավարությունը արտասահմանյան ընկերությունների աջակցությամբ արտադրական խոշոր նշանակության նավթի հանքավայրեր բացեց Բաղեշից հարավ-արևմուտք ընկած Ռաման, Ռամանդաղ, Խարզան և Շելմո վայրերում: Վերոնշյալ տարածքները գտնվում են պատմական Աղձնիքի սահմաններում: Տե՛ս* **Мелик-Адамян** Г. *Изыскания российских геологов в Западной Армении летом 1917 г. (ՊԲՀ, 2011, 2, էջ 60):*

[46] **Пиотровский Б. Б.** *Ванское царство (Урарту), М., 1959, с. 163-164,* **Saint-Martin.** *Mnmoires historique et geographique sur l'Armnnie, tome second, Paris, 1819, p. 361, 429,* **Երեմյան U. S.,** *նշվ. աշխ., էջ 93:*

[47] *Ելնելով այն փաստից, որ ժամանակին Արղանա-Մադենում շահագործվում էին հնուց այս տարածքում հայտնի երկաթահանքերը՝ Ս. Երեմյանը «Աշխարհացոյց»-ում հիշատակվող Աղձնիքի երկաթահանքերը զետեղում է նախ Անգեղ տուն գավառում: Այնուհետև, հաշվի առնելով Փ. Բուզանդի այն հաղորդումը, որի համաձայն, Տուրուբերանի Երևարք գավառին հարավից եզերող Հայկական Տավրոս լեռնաշղթայի այս մասը հին հայերը կոչում էին «Լեառն երկաթահատացն և կապարահատացն» (III, Ժ), անվանի գիտնականը միջնադարյան հեղինակների հիշատակած երկաթահանքերը, ըստ էության, տեղակայում է Հայկական Տավրոսի հյուսիս-արևելյան հատվածում, որը Տուրուբերանի և Աղձնիքի լեռնային սահմանն էր:*

[48] *Ս. Երեմյանը բյուրեղի հանքերը տեղադրում է այնտեղ, որտեղ Հայկական Տավրոսը ձգվում է դեպի հարավ-արևմուտք և հատվում է Եփրատ գետով՝ վկայաբերելով նաև XIII դ. մի հիշատակում. «Բիւրեղն՝ խաժագոյն է (կամ ծովագոյն) օդանման. և լինի սա յանցս Եփրատ գետոյ» (Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1979, I, էջ 491):*

[49] **Ամիրեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 8:*

պղնձի և մկնդեղի արտահանման[50], Սասնո լեռներում բրոնզի բաղադրիչ-խառնուրդի՝ անագի ստացման վերաբերյալ[51]:

Թերևս առաջին սեպագիր տեղեկությունները Աղձնիքի՝ մետաղներով հարուստ լինելու մասին պատկանում են Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրթա II-ին և նրա որդի Աշշուրնաձիրապալ II-ին: Այս արքաներից առաջինը դեպի Բիթ-Զամանի կատարած իր արշավանքի ժամանակ մի շարք իրերի հետ ավար է տարել բրոնզ, կապար, և երկաթ[52], իսկ Աշշուրնաձիրապալը, իր տարեգրության մեջ ներկայացնելով Բիթ-Զամանիի կառավարիչ Ամմեբալի պալատից վերցրած ավարը, ի շարս այլոց, նշում է նաև «2 տաղանդ ոսկի, 2 տաղանդ արծաթ, 290 տաղանդ կապար, 100 տաղանդ պղինձ, 300 տաղանդ երկաթ, 100 պղնձե վազ, 3000 պղնձե ափսե»[53]: Այստեղ մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել վերոնշյալ մետաղների կշռաչափերը և մետաղե իրերի քանակային տվյալները, որոնք խոսում են այս երկրի հարստության մասին, և սա դեռ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է հնագույն Աղձնիքի ընդամենը մեկ «երկրին»: Բիթ-Զամանիից վերցված ավարի մեջ հիշատակվում են նաև լծասարքեր, կառքեր, փայտե սեղաններ, ոսկուց և փղոսկրից պատրաստված սեղաններ[54]: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ Աշշուրնաձիրապալ II-ը Շուբրիայի հարկն ընդունում է Դամդամուսա քաղաքում՝ ոսկու, արծաթի, բրոնզի, կապարի, երկաթի, անոթների, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, ձիերի տեսքով[55]:

Ք.ա. XIII դ. դարի եգիպտական աղբյուրներն առաջին անգամ վկայում են երկաթի մասին[56]: Սակայն, ինչպես հայտնի է հնագիտական տվյալներից, դեռևս ոչ Եգիպտոսում, ոչ Սիրիայում և ոչ էլ Պաղեստինում չեն հայտնաբերվել երկաթահանքերի շահագործման և երկաթի ստացման հետքեր: Մի շարք հնագետների կարծիքով՝ երկաթի և դրա մշակման հայրենիք է համարվում Հայկական լեռնաշխարհը[57]: Որոշ մասնագետներ գտնում են նաև, որ այստեղ երկաթի արդյունահանման և մշակման ժամանակաշրջանը թվագրվում է Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսով՝

---

[50] **Բորոխյան Ա.,** *Հարավային Հայաստանի առնչությունները Հյուսիսային Սիրիայի հետ Ք. Ա. 3-2-րդ հազարամյակների սահմանին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Եր., 2000, էջ 129: Տե՛ս նաև* **Montero-Fenollos J. L.** *Le travail et le commerce du metal en Syrie du Nord, Orient Express, 1, 1997, p. 19,* **Sasson M. J.** *A sketch of North-Syrian Economic Relations in the Middle Bronze Age (Journal of the Economic and Social History of the Orient, 9, 1966, p. 168).*

[51] **Гогинян С. Е.** *Металлопроизводство в древней Армении, Е., 2005, с. 20.я*

[5m]*яАВИИУиmmя*

[5y]*я***Гогинян С. Е.**, *նշվ. աշխ., էջ 142:*

[54]*яАВИИУ; 26 (об., 36).я*

[55] *Նույն տեղում, 26 (об., 36):*

[56] **Гогинян С. Е.**, *նշվ. աշխ., էջ 22:*

[57] *Նույն տեղում, էջ 22:*

մասնավորապես Ք.ա. XIII-XII դդ.[58]: Ինչպես արդեն նշեցինք, Հայկական Տավրոսը պատմական Հայաստանի երկաթի հարուստ հանքեր ունեցող լեռնազանգվածներից էր, և Հայկական լեռնաշխարհից մասնավորապես դեպի Միջագետք և Եգիպտոս երկաթի արտահանման առնչությամբ անհրաժեշտ է կարևորել նաև Աղձնիքի դերակատարությունը[59]:

Վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհում իրականացված հնագիտական և ընդերքաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աղձնիքի Անգեղ տուն գավառում գտնվող Արղանա-Մադենի հանքավայրը հարուստ է ոչ միայն պղնձի, այլ նաև ոսկու պաշարներով[60]: Ավելին՝ Հայկական լեռնաշխարհի ոսկու սկզբնական արդյունահանումը սերտորեն առնչվում է հենց Արղանա-Մադենի պղնձահանքերի շահագործման հետ[61]: Թերևս վերոգրյալին լրացնելու են գալիս ասուրական սեպագիր աղբյուրները, որոնց համաձայն՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող մի շարք «երկրներ» ոսկով հարկ են վճարել Ասորեստանին[62]: Թվարկված 12 երկրների շարքում հիշատակվում են նաև Հայկական Տավրոսում և դրանից հարավ գտնվող՝ Աշշա (Ալզի), Բիթ-Զամանի, Շուբրիա, Խաբխի, Բաբխի և Խուբուշկիա երկրները, որոնցից առնվազն չորսը՝ Ալզին, Խաբխին, Բաբխին և Խուբուշկիան իրենց ոսկու պաշարները լրացնում էին միմյանց համար սահմանաբաժան հանդիսացող Ջերմ գետի ափին գտնվող Սղերդ լեռան հանքերի շահագործմամբ[63]: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հասկանալի է դառնում, որ թերևս հենց մետաղահանքերի հարուստ բազմազանությունն էլ պատճառ է դարձել, որ սեպագիր աղբյուրներում Աղձնիքը երբեմն կոչվել է նաև «մետաղների երկիր»[64]: Բնականաբար, այս հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրել տվյալ տարածքում դեռևս վաղնջական ժամանակներից սկսած՝ մետաղագործության, հատկապես զինագործության

---

[58] Նույն տեղում, էջ 22-23:

[59] Հին Եգիպտոսի արհեստագործական արտադրանքների գծով ուսումնասիրող-մասնագետ Ա. Լուկասը երկաթագործության մոտավոր սկզբնաշրջանի առնչությամբ գրում է. «Քանի որ հանքաքարից երկաթի արդյունահանումը եգիպտական հայտնագործություն չէ՝ դժվար է ենթադրել, որ այս մետաղի հետագա մշակումը ևս հայտնաբերվել է եգիպտացիների կողմից: Այդ իսկ պատճառով միանգամայն հնարավոր է, որ Եգիպտոս էին բերվում ասիացի դարբիններ, որպեսզի եգիպտացիները նրանցից սովորեին նոր մետաղի ձուլումը և մշակումը» (տե՛ս նույն տեղում, էջ 22-23): Տե՛ս նաև **Лукас А.** *Материалы и ремесленные производства Древнего Египта, М., 1958.*

[60] Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ-մթ XIV դար), Ե., 2007, էջ 25:

[61] Նույն տեղում, էջ 48:

[62] Նույն տեղում, էջ 158:

[63] Նույն տեղում, էջ 158-159:

[64] **Խաչատրյան Ա.,** *Միտանի-խարրի ժողովուրդը (Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ, Ե., 1926, էջ 141):*

զարգացման բարձր մակարդակի և մետաղագործական այլ արհեստների առկայության մասին[65]*:*

Այսպիսով, ուսումնասիրությունները փաստում են, որ հնագույն Աղձնիքը, հիմնականում լինելով լեռնաաշխարհագրական կամ կիսա-լեռնաշխարհագրական երկրամաս, աչքի էր ընկնում հատկապես զարգացած երկրագործությամբ, այգեգործությամբ, գինեգործությամբ, մետաղաարդյունահանմամբ և անասնապահությամբ, հին աշխարհում կարևորվում էր սեփական տարածքում գտնվող մետաղահանքերի և մետաղների արդյունահանման շնորհիվ:

Այն եղել է Եգիպտոսին, Խաթթիին և Միջագետքին տարբեր տեսակի մետաղներ մատակարարող կարևորագույն տարածաշրջաններից մեկը: Մետաղների արդյունահանումն ու մշակումն իրենց հերթին գալիս էին զարկ տալու գինագործության և մետաղագործական այլ արհեստների զարգացմանը Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում:

Այս ամենը վկայում է Աղձնիքի՝ հնագույն ժամանակներից ի վեր Առաջավոր Ասիայի քաղաքակրթական կարևորագույն կենտրոններից մեկը լինելու մասին:

О ТОПОГРАФИИ И ЭКОНОМИКЕ ДРЕВНЕГО АЛЗНИКА

ХУДАНЯН А. О.

Резюме

Древнее царство Алзи (KUR ^{URU}Alzi(ya), KUR ^{URU}Alše/i), упоминаемое в хеттских источниках, было локализовано в юго-западной части Армянского нагорья. Исследователи идентифицируют его с древнеармянской провинцией Великой Армении – Алзником. В урартских клинописях оно встречается в форме Алзини, в то время как в античных и средневековых источниках оно упоминается как Арзанене, Арзан, Эрзен, Алзник и т.д. Однако более точную и подробную информацию о топографии Алзника можно найти в армянских средневековых манускриптах, в частности, в “Ашхарацуйц”-е. Кроме того, ассирийские и урартские клинописные тексты свидетельствуют о развитом скотоводстве в Алзнике (Алзи, Бит-Замани, Арме-Шубрия), о производстве вин и добыче разных металлов (железо, свинец, золото и т.д.) на его территории, что явствует о той важной роли, которую играл древний Алзник в торговле и производстве металлов на Армянском нагорье, в Месопотамии и Малой Азии.

ON THE TOPOGRAPHY AND ECONOMY OF ANCIENT AGHDZNIKH

---

[65] **Խաչատրյան Ա.,** *Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, Ե., 1933, էջ 468:*

H. KHUDANYAN

Abstract

The ancient kingdom of Alzi (KUR URUAlzi(ya), KUR URUAlše/i) of the Hittite inscriptions, situated in the south-western part of the Armenian Highland is identified by the experts as the ancient Armenian province of Aghdznikh of Armenia Major. Urartian inscriptions refer to it as Alzini, while in ancient and medieval sources it is known as Arzanene, Arzan, Erzen, Aghdznikh, etc. However, medieval Armenian manuscripts, "Ashkharhatsoyts' in particular comprise more accurate and detailed information concerning the topography of Aghdznikh. At the same time, the Assyrian and Urartian cuneiform recordings testify about the wealth of Aghdznikh (Alzi, Bit-Zamani, Arme-Shubria, etc.) especially in cattle breeding, wine production and mining of such metals as iron, copper, lead, gold, etc. Hence, ancient Aghdznikh had its specific role and importance in the trade and metal extraction of the Armenian Highland, Mesopotamia, and Asia Minor representing a small but at the same time one of the most significant regions of the ancient world.